

Հաշտարարությունը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային մեթոդ

Նազելի Սմբատյան

Հայաստանում ֆրանսիական համալսարան

Ուսանող

Կողմերի միջև առաջացած վեճերը կարող են լուծվել տարբեր միջոցների կիրառմամբ, որոնցից թերևս ամենատարածվածը վեճերի լուծումն է դատական վարույթի շրջանակներում: Այն պարագայում, երբ առաջացած վեճի կողմերը պատկանում են նույն իրավական համակարգին, ասել թե առկա չէ օտարկերկրյա իրավունքի տարր, ապա վեճի լուծումը դատական եղանակով առավել կիրառելին է:

Սակայն հարցը բարդանում է, երբ առաջացող իրավահարաբերություններում առկա է օտարերկրյա տարր (կողմերից մեկը գտնվում է այլ պետության տարածքում, այլ պետության քաղաքացի է կամ հարաբերությունները ծագել են որևէ երրորդ երկրում և այլն): Առաջին տարբերակը, իհարկե, դատարան դիմելու հնարավորությունն է: Այս գործընթացը կարող է առաջացնել որոշակի անհարմարություններ:

Սովորաբար դատական կարգով վեճերի լուծումը համապատասխանեցվում է տվյալ պետության իրավական համակարգի առանձնահատկություններին, մենթալիտետին և օտարերկրյա ներկայացուցիչների տեսանկյունից այն կարող է դիտարկվել ոչ այդքան վստահելի ճանապարհ առաջացած վեճը լուծելու համար:

Գործին մասնակցող անձանց մոտ հնարավոր է լինի վստահության պակաս կամ բացակայություն ներպետական դատարանների նկատմամբ՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով՝

1. Համակարգի կոռումպացված լինելը,
2. Հայեցողականությունը,
3. Միջազգային վեճերի լուծման համար ոչ բավարար չափով մեխանիզմների առկայություն,
4. Օտարերկրյա դատական ակտերի կատարման ոչ այդքան մեծ հնարավորությունը այլ պետությունների տարածքում:

Խուսափելու համար առաջացող՝ օտարերկրյա տարրով իրավահարաբերությունների հետ կապված միջազգային ընդդատության խնդրից (տվյալ պարագայում գործի քննությունը հանձնվում է որևէ պետության ներպետական դատարանին) կողմերը որպես վեճերի լուծման այլընտրանք են տեսնում վեճերի լուծման արտադատարանային տարբերակները, որոնք համախմբված են ADR (Alternative Dispute Resolution) ընդհանուր անվան ներքո:

ADR-ի կիրառման արդյունավետ է նաև այն դեպքում, երբ առաջացող իրավահարաբերություններում բացակայում է օտարերկրյա տարրը, քանի որ այն երաշխիքներն ու հնարավորությունները, որոնք տրամադրում են վեճերի լուծման այլընտրանքային մեթոդները, բոլոր դեպքերում նպաստում են վեճի արագ և անկողմնակալ լուծմանը:

Վեճերի լուծման այլընտրանքային մեթոդներից է հանդիսանում հաշտարարությունը: Հաշտարարությունը գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ հաշտությամբ լուծելուն: (Հաշտարարության մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս)

Դեռևս Հին Հունաստանում և Հռոմեական քաղաքակրթության շրջանում այն մեծ զարգացում է ապրել: Ներկայումս հաշտարարության ինստիտուտն իր ուրույն տեղն ունի՝ որպես տարաբնույթ վեճերի, մասնավորապես՝ ընտանեկան, քաղաքացիական, աշխատանքային, արդյունավետ լուծման տեսանկյունից: Վերջին շրջանում այն առավել արդիական է դարձել Հայաստանի Հանրապետության իրավական դաշտում: Դա են փաստում «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 13.06.2018 թվականին), «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 17.06.2008 թվականին) ընդունումը, ինչպես նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ գլուխը, որն ամբողջությամբ նվիրված է հաշտարարության ինստիտուտին:

Այս ոլորտում որոշիչ նշանակություն է ունեցել 2015 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով քաղաքացիական իրավունքի համակարգ ներմուծվեց Հաշտարարության վերաբերյալ 22.3-րդ գլուխը, ինչպես նաև մի շարք հոդվածներ լրացվեցին հաշտարարությանը վերաբերող դրույթներով:

Սա կարևոր նորամուծություն էր, քանի որ մինչ այդ նման ծավալուն անդրադարձ չէր կատարվել այս ինստիտուտին, հաշտարարության ընթացակարգին, հաշտարարի նշանակմանը, արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վարույթին և այլն:

Այս ոլորտում հաջորդ նշանակալի փոփոխությունը 2018 թվականին ընդունված «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքն է, որը կարգավորում է հաշտարարության գործընթացը դատական վարույթի շրջանակներից դուրս: Բացի այդ, նույն թվականին ընդունվել է ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրքը, որն առավել կատարելագործված կերպով է ամրագրել հաշտարարության ինստիտուտին վերաբերող դրույթները:

Միջազգային փաստաթղթերի շարքում կարևոր տեղ է զբաղեցնում Միջազգային առևտրային հաշտարարության և հաշտարարության միջազգային համաձայնագրերի մասին UNCITRAL տիպային օրենքը, որն ընդունվել է 2002 թվականին և ներկայումս գործում է 2018 թվականի խմբագրությամբ: Այս տիպային օրենքը կարգավորում է հարցերի լայն շրջանակ, որոնք առնչվում են հաշտարարության բնականոն կազմակերպմանը և անցկացմանը: Մասնավորապես սահմանվում են հաշտարարների նշանակման ընթացակարգը, հաշտարարի և կողմերի միջև հաղորդակցությունը, հաշտարարի կողմից կողմերին տեղեկատվության բացահայտման կարգը, ապացույցների քննությանը վերաբերող մի շարք հարցեր, հաշտության համաձայնության իրավական ստատուսը և այլն:

Հաշտարարության վերաբերյալ կանոններ սահմանվել են նաև Առևտրային միջազգային պալատին կից գործող Վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների Միջազգային կենտրոնի (International Center for ADR)¹ կողմից: Վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների Միջազգային կենտրոնը, որն առանձնացված մարմին է, համակարգում է Հաշտարարության կանոնների (ICC Mediation Rules) կիրառումը:

Հաշտարարության բնականոն գործընթացը ապահովելու նպատակով Հաշտարարության կանոններով կարգավորվում են հետևյալ հարցերը՝ վեճի լուծումը Հաշտարարության կանոններով կարգավորելու վերաբերյալ համաձայնության կայացման կարգը,

¹ <https://iccwbo.org/dispute-resolution-services/mediation/icc-international-centre-for-adr/>

հաշտարարության անցկացման վայրը և լեզուն, հաշտարարների ընտրության, կատարված ծախսերի և փոխհատուցման, հաշտարարության անցկացման կարգը:

Հաշտարարության կիրառումը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակ, թույլ է տալիս հաշտարարության կողմերին խուսափել ավելորդ դատական քաշքշուկներից, միաժամանակ՝ հնարավորություն ընձեռելով փոխադարձ համաձայնությամբ լուծել առաջացած վեճը: Սա դեռևս չի նշանակում, որ հաշտարարության օգնությանը կողմերը կարող են դիմել միայն դատաքննության սկզբնական փուլում: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի՝ առաջին աստիճանի կամ վերաքննիչ դատարանը *վարույթի ցանկացած փուլում* կողմերին հաշտեցնելու նպատակով նրանց համաձայնությամբ կամ միջնորդությամբ իրավունք ունի նշանակելու արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը առավելագույնս ներկայացնում է հաշտարարության էությունը՝ հաշտարարությունը գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ հաշտությամբ լուծելուն: Տվյալ ձևակերպման մեջ ուշադրության է արժանի անկողմնակալ երրորդ անձի ներգրավվածությունը հաշտարարության գործընթացում, ում դերին և նշանակությանն առավել մանրամասն անդրադարձ կկատարվի հետագա շարադրանքում:

Հաջորդ ձևակերպումը, որն ուշադրության է արժանի, վերաբերում է կողմերի ինքնավարությանը՝ նրանց միջև ձեռքբերված համաձայնությունն է հիմք հանդիսանում վեճը հաշտարարության ինստիտուտի կիրառմամբ լուծելու համար: Այս տեսանկյունից հաշտարարությունը բավականին գրավիչ միջոց է, քանի որ մեծապես նպաստում է կողմերի ազատ կամքի դրսևորմանը, որոշակի համաձայնության ձեռքբերմանը՝ առանց դատական արարողակարգի: Իհարկե, առկա են որոշակի ընթացակարգեր, որոնք պարտադրաբար պետք է պահպանվեն հաշտարարության ամբողջ գործընթացում:

Հաշտարարություն կարող է կիրառվել ինչպես կողմերի միջև նախապես ձեռքբերված համաձայնությամբ, այնպես էլ դատարանի կողմից՝ գործը դատական քննության հանձնելուց հետո: Առաջին աստիճանի կամ վերաքննիչ դատարանը վարույթի ցանկացած փուլում

կողմերին հաշտեցնելու նպատակով նրանց համաձայնությամբ կամ միջնորդությամբ իրավունք ունի նշանակելու արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց²:

Հաշտարարությունն օժտված է մի շարք դրական կողմերով, որոնք հնարավորություն են տալիս կողմերին հասնել իրենց համար առավել ցանկալի արդյունքի.

1. Հաշտարարության առանցքային առավելություններից մեկը դրա գաղտնիությունն է: Այն իր ամրագրումն է ստացել վերոհիշյալ օրենքի 4-րդ հոդվածում, որտեղ որպես հաշտարարության սկզբունք, ի թիվս այլնի, ներառված է նաև գաղտնիությունը: Բացի այդ, հաշտարարության ընթացքում բացահայտված կամ արտահայտված տեղեկությունները գաղտնի են և կարող են հրապարակվել միայն կողմերի գրավոր համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Հաշտարարը, կողմերը կամ հաշտարարությանը մասնակցած կամ մասնակցող յուրաքանչյուր անձ չեն կարող հարցաքննվել որպես վկա այն տեղեկությունների վերաբերյալ, որոնք իրենց հայտնի են դարձել հաշտարարության ընթացքում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի («Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է կողմերի իրավունքը համատեղ միջնորդություն ներկայացնել գործն՝ առանց հաշտության համաձայնությունը հաստատելու, կարճելու վերաբերյալ, եթե հաշտության համաձայնությունում առկա է գաղտնիության վերաբերյալ պայման:

Այս դրույթների օրենսդրական ամրագրումը կարևոր երաշխիք է հատկապես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների համար, քանի որ թույլ է տալիս պաշտպանել իրենց հեղինակությունն ու գործարար համբավը:

2. Հաշտարարության գործընթացի հաջորդ դրական կողմը վերջինիս արագությունն է: Դատաքննության պարագայում գործի քննության ողջամիտ ժամկետները շատ

² ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 184.1:

հաճախ չեն պահպանվում և դրանց քննությունը կարող է տևել մի քանի տարի: Սա առաջին հերթին պայմանավորված է դատարանների խիստ ծանրաբեռնվածությամբ: Դատական ճանապարհով վեճի լուծման պարագայում դատական նիստերը նշանակվում են դատարանի կողմից, մինչդեռ հաշտարարության պարագայում դա ևս վերապահված է կողմերի ազատ կամաարտահայտությանը:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հաշտարարը պարտավոր է հաշտարարությունն իրականացնել հնարավորինս սեղմ ժամկետներում:

Իր հերթին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք 185-րդ հոդված սահմանում է, որ դատարանի կողմից նշանակված հաշտարարության սկզբնական ժամկետը երեք ամիս է, որը, կողմերի միջնորդությամբ, կարող է երկարաձգվել միայն մեկ անգամ՝ մինչև վեց ամիս ժամկետով:

3. Հաջորդ հատկանիշը հաշտարարության գործընթացի մատչելիությունն է: Ինչպես նշվեց՝ դատական նիստերը կարող են տարիներ շարունակ ձգձգվել: Արդյունքում առաջանում են հավելյալ ծախսեր, որոնց շարքին նաև հավելյալ վճարումներ փաստաբաններին:

Հաշտարարի կողմից հաշտարարության հետ կապված գործունեությունն իրականացվում է վճարովի հիմունքներով: Վարձատրության չափը որոշում են կողմերը և հաշտարարը՝ իրենց միջև ձեռքբերված համաձայնությամբ («Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է 4 ժամ անվճար հաշտարարության հնարավորություն, եթե մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը: Այս ինստիտուտի կիրառման իրավասությունը վերապահված է դատարանին, վերջինս իր նախաձեռնությամբ կարող է նշանակել անվճար հաշտարարություն:

Բոլոր դեպքերում հաշտարարության գործընթացն ավելի կարճ է տևում, հետևաբար՝ այն մնում է վեճերի լուծման առավել մատչելի տարբերակ:

4. Եթե կողմերին հաջողվել է գալ ընդհանուր հայտարարի, ապա հաշտարարության գործընթացի ավարտին կնքվում է վեճը հաշտությամբ լուծելու վերաբերյալ համաձայնություն: Հաշտության համաձայնությունը կողմերի կողմից դեպքերի մեծամասնության պարագայում կատարվում է ինքնակամ, քանի որ ի վերջո հաշտարարության ամբողջ նպատակը կողմերի համար առավել նպաստավոր պայմաններով հաշտության կայացումն է:

Այստեղ բացառություն կարող է լինել կողմերից մեկի՝ իր պարտավորությունների ինքնակամ չկատարումը, ինչն էլ հետագայում կհանգեցնի այդ պարտավորությունների հարկադիր կատարման միջոցի կիրառման: Մինչդեռ, դատական կարգով վեճերի լուծման դեպքում շատ հաճախ կողմերից մեկը համաձայն չի լինում կայացված որոշման կամ վճռի հետ, ինչն էլ հիմք է հանդիսանում կայացված դատական ակտի բողոքարկման համար:

5. Ինչպես նշվեց հաշտարարության գործընթացում սկզբունքային նշանակություն ունի կողմերի ինքնավարությունը՝ հաշտարարության ամբողջ ընթացքում: Բայց այս հանգամանքը որևէ կերպ չի խոչընդոտում հաշտության համաձայնության հարկադիր կատարման ապահովմանը:

Այսինքն, այն պարագայում, երբ հաշտության համաձայնություն կնքած կողմերից մեկը հրաժարվում է կատարել սույն համաձայնությամբ նախատեսվածը, ապա մյուս կողմն իրավունք ունի պահանջել ձեռքբերված համաձայնությունը ամրագրող հաշտության համաձայնության հարկադիր կատարում:

Հաշտարարության գործընթացում առանցքային դերակատարություն ունի հաշտարարը, ով անկախ, անկողմնակալ, գործի էլքով շահագրգռվածություն չունեցող ֆիզիկական անձ է, որն իրականացնում է հաշտարարություն կողմերի միջև առկա վեճը հաշտությամբ լուծելու նպատակով:

Ներկայիս գործող ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է հաշտարարների արտոնագրում: Համաձայն «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ արտոնագրված հաշտարարի որակավորում կարող է ստանալ.

1) 25 տարին լրացած և բարձրագույն կրթություն ունեցող անձը,

2) դատավորի պաշտոնում պաշտոնավարման առնվազն երեք տարվա փորձառություն ունեցող նախկին դատավորը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա լիազորությունները դադարեցվել են կարգապահական խախտում թույլ տալու, կամ նրա լիազորությունները դադարել են նրա նկատմամբ կայացված մեղադրական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցվելու հիմքով,

3) իրավունքի ոլորտում մասնագիտական աշխատանքի առնվազն երեք տարվա փորձառություն ունեցող իրավաբան գիտնականը:

Առկա են նաև որոշ սահմանափակումներ կապված արտոնագրված հաշտարարի որակավորման շնորհման հետ: Մասնավորապես արտոնագրված հաշտարար չի կարող լինել այն անձը, ով

1) հանրային ծառայող է,

2) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը մարված կամ հանված չէ,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչված է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել,

4) ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում,

5) ով հեռացվել է հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունից, և հեռացվելուց հետո չի անցել երեք տարի:

Վերոհիշյալ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է հաշտարարի իրավունքներն ու պարտականությունները: Հաշտարարն իրավունք ունի հաշտարարության ընթացքում

հանդիպումներ կազմակերպելու ինչպես հաշտարարության բոլոր կողմերի հետ միաժամանակ, այնպես էլ հաշտարարության յուրաքանչյուր կողմի հետ առանձին, ազատորեն կիրառելու օրենքով չարգելված հաշտարարության մեթոդներ, իր ծառայությունների դիմաց ստանալու վճար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, գովազդելու իր ծառայությունները:

Սույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է հաշտարարի պարտականությունները, այն է՝ հաշտարարը պարտավոր է մինչև հաշտարարությունն սկսելը հաշտարարության կողմերին պարզաբանել իր դերը, հաշտարարության գործընթացի բնույթը, հաշտության համաձայնության և անհրաժեշտության դեպքում նման համաձայնություն ձեռք չբերելու հետևանքները, հրաժարվել հաշտարարություն իրականացնելուց, եթե գտնում է, որ իր մասնակցությունը հաշտարարության գործընթացին կհանգեցնի հաշտարարության որևէ սկզբունքի կամ հաշտարարի վարքագծի կանոնների խախտման, պահպանել հաշտարարության սկզբունքները և հաշտարարի վարքագծի կանոնները, անցնել հաշտարարների ամենամյա պարտադիր վերապատրաստումը և այլն:

Հաշտարարը հաշտարարության ընթացքում պետք է լինի անաչառ և անկողմնակալ: Նման դրույթ ամրագրված է «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում: Բացի այդ, Միջազգային առևտրային հաշտարարության և հաշտարարության միջազգային համաձայնագրերի մասին UNCITRAL տիպային օրենքի³ 6-րդ հոդվածն անդրադարձ է կատարում անաչառության և անկողմնակալության սկզբունքին՝ նշելով, որ հավանական հաշտարարը պետք է բացահայտի ցանկացած տեղեկություն, որը կարող է հիմնավոր կասկած հարուցել վերջինիս անաչառության և անկողմնակալության վերաբերյալ:

Իր հերթին, վերոհիշյալ տիպային օրենքի մեկ այլ հոդված հաշտարարի անաչառության և անկախության սկզբունքի ցանկացած խախտում կարող է դիտարկել որպես բավարար հիմք կողմի՝ տվյալ պետության տարածքում հաշտության համաձայնության կատարումը ապահովելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժելու համար:

³ uncitral.un.org, UNCITRAL Model Law on International Commercial Mediation and International Settlement Agreements Resulting from Mediation, 2018 (amending the UNCITRAL Model Law on International Commercial Conciliation, 2002), article 6(5)

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը սահմանում է հաշտարարի արտոնագրմանը, արտոնագրված հաշտարարների ռեեստրին, արտոնագրված հաշտարարների վերապատրաստմանը վերաբերող դրույթներ: Նախատեսվում է արտոնագրված հաշտարարի որակավորում ստանալու ընթացակարգը, ինչպես նաև այն պահանջների ցանկը, որոնց պետք է բավարարի այն անձը, ով ցանկանում է դառնալ արտոնագրված հաշտարար:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ արտոնագրված և հաշտարարի արտոնագիր չունեցող հաշտարարների մասնակցության հարցին հաշտարարության գործընթացում, այն է՝ նրանցից յուրաքանչյուրի մասնակցությամբ կնքված հաշտության համաձայնության իրավական ստատուսին:

Ինչպես նշվեց կողմերն ազատ են հաշտարարի ընտրության հարցում և չկա որևէ սահմանափակում տվյալ պարագայում: «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքը կողմերի միջև առաջացած վեճը հաշտարարությամբ լուծելու համար որպես նախապայման ուղղակիորեն չի դիտարկում հաշտարարի արտոնագրված լինելու հանգամանքը:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքի մի շարք հոդվածներում օգտագործվում է «արտոնագրված հաշտարար» հասկացությունը և ոչ ուղղակի «հաշտարար»:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքի 184-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանը վարույթի ցանկացած փուլում կողմերին հաշտեցնելու նպատակով նրանց համաձայնությամբ կամ միջնորդությամբ իրավունք ունի նշանակելու **արտոնագրված հաշտարարի** մասնակցությամբ հաշտարարական գործընթաց»:

Բացի այդ նույն օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ եթե հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնությունը կնքվել է արտադատական կարգով՝ **արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ**, ապա հաշտարարության յուրաքանչյուր կողմ իրավունք ունի հաշտության համաձայնությունը կնքելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում,

դիմելու իր բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան՝ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով:

Օրենսդիրը նման իրավունքի իրացման պայման է դիտարկել արտոնագրված հաշտարարի մասնակցությունը հաշտարարության գործընթացին:

Հաշտության համաձայնության կարևորագույն հատկանիշներից մեկը դրա կատարման ապահովմանն ուղղված երաշխիքների ամրագրումն է: Եթե կողմերից մեկը խուսափում է կատարելուց կամ պատշաճ չի կատարում տվյալ համաձայնությամբ իր վրա դրված պարտավորությունները, մյուս կողմն իրավունք ունի պահանջել պարտավորությունների կատարում դատական կարգով:

Դատարանի կողմից նշանակված հաշտարարության դեպքում, եթե կնքվում է հաշտության համաձայնություն, արտոնագրված հաշտարարը պարտավոր է հաշտության համաձայնությունն ստորագրելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցել դատարանին՝ կցելով հաշտության համաձայնության բնօրինակը: Ստանալով հաշտարարի ծանուցումը վեճը հաշտարարությամբ լուծելու մասին՝ սեղմ, բայց ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում դատարանը հաստատում կամ մերժում է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը կամ կարճում է գործի վարույթը՝ ապահովելով հաշտարարության գաղտնիությունը⁴:

Արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնության կատարելիությունն ապահովելու նպատակով առկա են օրենսդրական երաշխիքներ: Խոսքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 39-րդ գլխի մասին է, որը սահմանում է արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վարույթի ընթացակարգը: Այս համատեքստում հարկ է անդրադառնալ սույն գլխի 288-րդ հոդվածի դրույթներին.

Այն պարագայում, երբ կողմերի միջև հաշտության համաձայնությունը կնքվել է դատական վարույթի շրջանակներից դուրս՝ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ, ապա հաշտարարության յուրաքանչյուր կողմ հաշտության համաձայնությունը կնքելու օրվանից

⁴ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 186 հոդված, 4-րդ և 6-րդ մասեր)

հետո՝ վեց ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու իր բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան՝ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով:

Դիմումի քննության արդյունքներով դատարանը սույն օրենսգրքով սահմանված՝ հաշտության համաձայնությունը հաստատելու կանոններով կայացնում է վճիռ՝ հաշտության համաձայնությունը հաստատելու կամ դիմումը մերժելու մասին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 291-րդ):

Իր հերթին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարման պարտադիրությունը դրանց հասցեատերերի համար:

Վերոհիշյալ հոդվածների համակցված վերլուծության արդյունքում հանգում ենք, այն եզրակացությանը, որ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը, որը հաստատված է դատարանի կողմից, պարտադիր է կատարման համար և այն չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է հանգեցնել դրա հարկադիր կատարման:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նկատել, որ այս պահին ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերով ամրագրված են այնպիսի դրույթներ, որոնք հաշտարարության գործընթացը դարձնում են առավել համակարգված, թույլ են տալիս կողմերին առավել արագ և դատական վարույթի շրջանակներից դուրս հասնել հաշտության: Առանձնահատուկ կարևորություն ունի հաշտության համաձայնության հարկադիր կատարման հնարավորությունը, այն իր տեսակի մեջ յուրահատուկ երաշխիք է, որը կողմերի մոտ լրացուցիչ վստահություն է ձևավորում առ այն, որ հաշտարարության արդյունքում ձեռքբերված համաձայնությունը կկատարվի՝ անկախ մյուս կողմի գործողություններից: